

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N01/08

Ստեփանակերտի քաղաքապետարանի ներքաղաքային երթուղիների հատկացման մրցութային հանձնաժողովի նիստի

<<20>> մայիսի 2014թ.

ք. Ստեփանակերտ

2014թ. մայիսի 20-ին տեղի ունեցավ Ստեփանակերտի քաղաքապետի 2013 թվականի փետրվարի 13-ի N228Ա որոշմամբ ստեղծված ներքաղաքային երթուղիների հատկացման մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստ:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

- | | |
|----------------------|---|
| 1. Սուրեն Թամրազյան | Ստեփանակերտի քաղաքապետի 1-ին տեղակալ (հանձնաժողովի նախագահ) |
| 2. Էդգար Ավանեսյան | Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար) |
| 3. Տիգրան Մելքումյան | Ստեփանակերտի քաղաքապետի օգնական |
| 4. Արայիկ Պողոսյան | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի տրանսպորտի գործունեության կարգավորման և լիցենզավորման բաժնի պետի տեղակալ |
| 5. Դավիթ Սարգսյան | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանապարհային ոստիկանության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի տրանսպորտային միջոցների փորձաքննության գծով ավագ տեսուչ |

Նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահ՝ Ս. Թամրազյանը:

Նիստը արձանագրում է հանձնաժողովի քարտուղար Է. Ավանեսյանը:

Նիստին հրավիրված էին փոխադրող կազմակերպությունների տնօրեններ՝ Լևոն Չալյանն ու Մհեր Մովսիսյանը:

I. ՕՐԱԿԱՐԳ

Ստեփանակերտի ներքաղաքային ավտոբուսային երթուղիներն սպասարկող <<Ստեփանակերտ-սերվիս>> ՓԲ և <<Մհեր>> ՍՊ ընկերությունների կողմից փոխադրավարձի վերանայման (բարձրացման) դիմումների՝ հաշվարկների, քննարկում:

Այլ հարցեր:

II. Հանձնաժողովի քարտուղարը քննարկման ներկայացրեց՝

- <<Ստեփանակերտ-սերվիս>> փակ բաժնետիրական և <<Մհեր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կատարված ու ներկայացված (2013 թվականին) հաշվարկները, համաձայն որոնց Ստեփանակերտի ներքաղաքային ավտոբուսային երթուղում մեկ ուղևորի փոխադրման գինը կազմում է համապատասխանաբար՝ 120,585 և 112,5 ՀՀ դրամ,

- Ստեփանակերտի ներքաղաքային երթուղիներում գործող չվացուցակները, երթուղիների սխեմաներն ու այլ անհրաժեշտ փաստաթղթերը,

Ելույթ ունեցան՝

- <<Ստեփանակերտ-սերվիս>> ՓԲԸ տնօրեն Լ. Չայյանը. <<2009 թվականին ներքաղաքային տրանսպորտի սակագինը վերանայվել է՝ 50 դրամից բարձրացվել է 70 դրամ, այդ ժամանակ ավտոշարժակազմում ընդգրկված էին հիմնականում ՌԱՖ մակնիշի ավտոմեքենաներ, որոնք 20 և ավելի տարիք ունեին ու սպասարկում էին ուղևորների կյանքը վտանգի տակ դնելով: Բացի նշվածից, այդ ժամանակներից ի վեր վառելիքի ու պահեստամասերի գներն աճել են կրկնակի և ներկայիս դրությամբ ընկերությունը կրում է ֆինանսական վնասներ>>:

- Նույն մտքին էր նաև <<Մհեր>> ՍՊԸ տնօրեն Մ. Մովսիսյանը, որն ավելացրեց. <<Մենք քաղաքի հասարակական տրանսպորտից օգտվողների համար վարկային միջոցներով ձեռք ենք բերել անվտանգ ու հարմարավետ նոր ավտոբուսներ, գիտակցելով որ մեր ուսերի վրա կրում ենք ֆինանսական ռիսկ, սակայն շուրջ մեկ տարի է աշխատում ենք վնասով ու չենք հասցնում հոգալ ընկերության ծախսերը>>:

- Հանձնաժողովի քարտուղարը մեկնաբանեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջները:

III. Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեցին և ուսումնասիրվեցին փոխադրողների կողմից ներկայացված հաշվարկները, ԼՂՀ օրենսդրությունը, Ստեփանակերտի

քաղաքապետի 2009 թվականի մայիսի 25-ի թիվ 607 և 2012 թվականի փետրվարի 20-ի թիվ 246Ա որոշումները՝ կից չվացուցակներն ու այլ նյութեր:

Ուսումնասիրելով նշված փաստաթղթերն ու փոխադրող կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվարկները, հանձնաժողովի անդամների կողմից միաձայն

ն ր ն շ վ ե ց՝

1. կատարել համապատասխան ուսումնասիրություններ <<Ստեփանակերտ-սերվիս>> ՓԲԸ և <<Մհեր>> ՍՊԸ ֆինասատնտեսական գործունեության մեջ,

2. ավտոբուսային շարժակազմի տեխնիկատնտեսական աշխատանքի վարչատնտեսական գործունեությունների կազմակերպման մեջ,

3. վերլուծել 2010 թվականից մինչև 2014 թվականներն ընկած ժամանակահատվածում կատարված ուղևորահոսքի հետազոտման փաստաթղթերով արտացոլված տվյալները և համադրել դրանք փաստացի ու նորմատիվային ցուցանիշների հետ,

4. կազմել և մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը Ստեփանակերտի քաղաքապետին ներկայացնել փոխադրման ներքաղաքային երթուղիները սպասարկող ավտոբուսի հաշվարկ-հիմնավորում: